

ՆՈՐ ԲԱՑԱՁԵՏԻ ԳԱԻԱՌ

Ե. ԱԱԱԹԵԱՆԻ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՈՍՏԻԿԱՆ ԱԿԱՆ ՇՐՋԱՆ.

ՀԱՅՈՑ ՆԵՐՔԻՆ ԱԽՏԱՅԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.

Ներքին Ախտա հայոց (62° 25' 55"— 40° 29' 25") և Թուսաց (62° 25' 25"— 40° 92' 45"), Ներքին Ախտան բաղկացած է երկու մասից, հայոց և ոռուսաց: Հայկականը գտնուում է վերին, արեելեան, մասում, հիմնուած է 1829 թուին, և բռնում է 17 դ. 1970 ք. ս. տարածութիւն, իսկ ոռուականը ներքնուում. հիմնուած է 1860 թ. և բռնում է 8 դ. 930 ք. սաժէն տեղ: Թէ փողոցների կանոնաւորութեամբ և թէ աների գեղեցկութեամբ ոռուականը բարձր է հայկականից, թէպէտ և վերջինումս էլ կան ոռուականի նման գեղեցիկ, երկյարկանի տներ: Հայկական մասի զարդը Ս. Խաչ եկեղեցին է, որ որպէս դիւղական մի աղօթատուն, բաւական գեղեցիկ է՝ ունենալով սրբատաշ քարով շինուած մի զանգակատուն: Կաննակ երկու հին մատուռներ Աստուածածին և ս. Խաչ անուններով: Թուսական մասը բաղկացած է երեք կանոնաւոր և երկար փողոցներից, բաւական գեղեցիկ, երկյարկանի տներով, ուր առաւելապէս բնակւում են այս սոտիկանական շրջանի պաշտօնեաները, ինչպէս՝ սոտիկանը, հաշտարար դատաւորը և միջնորդը, բուժարանի բժիշկը, անտառապետը, փոստային գրասենեակի վերակացուն և այլն:

Երկու մասում կան 19 խանութ, որոնք բացառապէս հայերին են պատկանում:

Հայերը գաղթել են 1829 թ. Մակուի խանութեան Մառան և Նըրխբուախ գիւղերից, յետոյ մի քանի տուն էլ եկել են Վանի Հայկաձորի գիւղերից: Թուսաները, որ մալական աղանդաւորներ են, եկած են 1866 թ. Տամբովի նահանգից: Թէ հայերը և թէ ոռուները ունին առանձին առանձին տարրական գպրոց. հայկա-

կանը՝ եկեղեցական է, երկսեռ և մի դասեան, այժմ շինուում է գպրոցական գեղեցիկ շէնք:

Հայերը և մալականները միմեանց հետ շատ չեն շփւում, միմեանց հարսանիքի կամ ուրախութեան չեն մասնակցում, ուստի և այնքան մեծ ազդեցութիւն չունին միմեանց վրայ:

Հայերից քչերը սովորել են ոռուսներից ոռուսներէն, իսկ նրանցից միայն մի քանիսը հասկանում են հայերէն:

Հայերը նրանցից սովորել են ֆուրգոններ պահել, նրանց ձեր սայլեր գործածել, նրանց նման ձի լծել կամին և գութանին, հնձի մեքենաներ առնել, Մալականներն էլ հայերից սովորել են պանիր, իւղ պատրաստել, մի քանի կանաչեղէնից բռնուածքներ դնել:

Պէտք է ասել նաև, որ մալականները հայերից պակաս ողջախոն լինելով, վատ ազդեցութիւն են ունեցել վերջիններիս վերայ:

Հայերի թիւն է՝ 269 տուն, 1143 ար. 968 / գ. ի միասին՝ 2111 հոգի: Ռուսներինը՝ 74 տուն, 341 ար. 341 իզ. ի միասին՝ 682 հոգի: Թէ հայերը և թէ ռուսները պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ բերնակրութեամբ ու առևտով: Հայերը ունին 1676 դ. 2040 ք. ս. վարելահող. 7 դ. 1630 ք. ս. խոտանեղի, 1379 դ. 2130 ք. ս. արօտատեղի: իսկ ռուսները՝ 661 դ. 2070 ք. ս. վարելահող, 360 դ. 1100 ք. ս. խոտատեղի. 475 դ. 360 ք. ս. արօտատեղի:

Ռուսները գիւղից փոքր ինչ հեռու ունին մի քանի երոպական ձևով շինուած ջրաղացներ, որոնցից մի քանիսը այժմ հայերի ձեռքն են անցել:

Ներքին Ախատից երեք կիլոմետր հեռու, դէպի հարաւ գտնաւում է 2 աման ջիւլ անունով մի գիւղատեղի:

Վերին Ախատ. ($62^{\circ} 24' - 40^{\circ} 30' 35''$).—Տեղաւորուած է Զամանդիւկ և Գետրոսի-դար բլուրների ստորոտում, մի փոքրիկ հովտի մէջ և բռնում է 11 դ. 1930 ք. ս. արածութիւն, որից 9 դ. 550 ք. ս. շինութիւնների տակ է: Գիւղում կայ սրբատաշ քարով շինուած մի եկեղեցի ս. Աստուածածին անունով, և երեք մատուռներ, որոնցից մինը շինուած է սուրբ համարուող մի աղքիւրի վրայ:

Գիւղի շրջակայքում կան երեք յորդ աղքիւրներ, երկու եկեղեցու հիմապատեր և բաւականաչափ խաչքարեր ու տների հիմքեր: Երեսում է, որ հնումը այստեղ բաւական մեծ բնակութիւն է եղել, աւանդութիւնն էլ աւելացնում է, որ Պոօշ իշխանին է պատկանել:

Բնակիչները հայեր են, 1829 թ. Պարսկաստանի Ալբուլադ գիւղից գաղթած. ընդամենը 221 տուն են. 965 ար. 861 իգ. միասին 1826 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ, մասնաւորապէս խաշնարածութեամբ: Ունին 1426 դ. 240 ք. ս. վարելահող, 1399 դ. 1350 ք. ս. արօտատեղի:

Կոստոնտինովկա կամ Դարայիսակ, հնումը Ետակամոր.—(62° 23' 23"— 40° 32' 9").— Ընկածէ է մի թեք տարածութեան վրայ, որի երեք կողմը պատած է անտառապատ լեռներով, իսկ արևելեանը բաց է և իւր առջև ունի մի գեղեցիկ տեսարան՝ Ռնդամալի հարթութիւնը՝ ուղրապտոյտ Զանգուլով: Պատմական Մազկոցաձոր կամ Դարաչիչակ անունն արդէն ցոյց է տալիս՝ որ այս վայրը փթթում է բիւրաւոր ծաղիկներով, որոնց մօտ խոխոջում են բազմաթիւ աղբիւրներ: Սրանցից Կաթնաղբիւրն ու Թթուաղբիւրը անընդհատ հիւրընկալում են ամարանոց եկած զուարճասէր խըմբին:

Այս թեք տարածութեան ստորին մասում գետեղուած է մալականների գիւղը, Կոստանտինովկան, միջին մասում գտնւում է է Դարաչիչակ ամարանոցը, իսկ վերինում՝ Կիչառիսի հոչակաւոր մենաստանը:

Կոստանտինովկա գիւղը հիմուած է 1830 թուին, բանում է 16 դ. 1910 թ. ս. տարածութիւն, որից 4 դ. 1340 ք. ս. գտնվում է շինութիւնների տակ: Ունի մի քանի կանոնաոր փողոցներ, կղմնուրածածկ քարաչէն տներ՝ ընդարձակ բակերով և մի պետական միջասեան գլուխոց: Բնակիչները ուսւ մալական աղանդաւորներ են, ընդամենը 65 տուն 252 ար. 247 իդ. ի միասին 499 հոգի: Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և բեռնակրութեամբ: Ունին 138 դ. 1060 թ. ս. վարելահող, 705 դ. 2180 ք. ս. արօտատեղի և 705 դ. 1460 ք. ս. տարածութեան անտառ:

Դարաչիչակ ամարանոցը հիմուած է 1832 թ. իշխան Բարսեղ Բեհբութիւնի, այդ միջոցներին նուաճուած Հայկական նահանգի կառավարչի, կարգադրութեամբ, ուր այդ ժամանակից մինչև այժմ ամառները տեղափոխուեմ են Երևանի կառավարչական ատեանները և տեղական զօրքը, վերջերքս նաև Երևանի բնակիչներից ունեսորները: Ամարանոցը բոնում է 7 դ. 2010 ք. ս. տարածութիւն, որից ամբողջ 7 դ. գտնւում է շինութիւնների տակ: Ունի միայն երեք՝ արևելքից արևմուաք ձգուող փողոցներ, որոնք կտրւում են առի շեղ ուրիշ փողոցներով, որոնցից մինը բաւական լայն է և ուղիղ, կոչւում է Միլիօնեան, ծառազարդ է և իր ճիմելի է ծառայում, որովհետև սրա մօտ, նահանգապետի տան

առջն, օրամէջ նուագում է զինուորական նուագախումբը: Տներն ընդհանրապէս բաւական գեղեցիկ են, ու յարմարաւոր, փոքրիկ պարտէզներով: Հարաւային կողմը, անտառապատ բլրակի լանջին շինուած է մի փոքրիկ զբոսավայր, երկու ծառուղիներով և մի, բաւական մեծ բոտոնդայով: Յիշատակելի է նաև միակ, փայտաշէն հիւրանոցը, որ կարող է պարձել ոչ թէ մի որեւ է, ամենաշնչին յարմարութիւնով, այլ սարսափելի թանգութեամբ: Սրա մօտ է փոստատունը, գեղատունը և բաւականաչափ խանութներ: Ամառանոցը գետակից գուրկ է, Կեչառիսի վանքի հիւսիսային կողմում հոսող առուակը բաւական հեռու է, և միայն զբոսասէր երիտասարդներն են զնում, նրա մէջ փոքր ինչ յարմարացրած աւագաններում լողանում: Գիւղի մասում կան ոռուական ձեր բաղանիսներ:

Այս ամառանոցը երեանից հեռու է 54 վերսա տարածութեամբ, նոյն չափ և՝ Նոր-Բայալզէտ քաղաքից: Ամառները միայն երևանից դէպի Նոր-Բայալզէտ ձգուող ճանապարհի Ներքին Ախուտա կայարանից փոստային հաղորդակցութիւն է բացւում դէպի այս ամառանոցը, որ միայն 5 վերսա հեռու է գտնւում:

Կեչառիսի վանքը հիմնուած է 1033 թուրին Գրիգոր Մագիստրոսի ձեռքով(*), բաղկացած է չորս եկեղեցիներից և գրաւում է ամենալաւ տեղը՝ մի փոքրիկ, հարթութիւն, որի հիւսիսային կողմում տարածում է մի ձոր, փոքրիկ առուակով, որի եզրից անմիջապէս սկսւում է Ալիբէկ անտառապատ լեռազ:

Այս եկեղեցիներից մինը ծառայում է ամառանոց եկած հայերին իրեւ աղօթատեղի: Սրանցից փոքր ինչ ներքեւ գտընեւում է ուսւաց փայտաշէն եկեղեցին, և նահանգապահար գեղեցիկ բնակարանը, որի առջև զեռ մինչև այժմ կանգուն մնացել է սրբատաշ քարերից շինած մի բառձրապիր աթոռ, որի վրայից, աւանդութեան ասելով, Գրիգոր Մագիստրոսը և յիտոյ տեղւոյն մեծամեծները խօսել են ժողովրդի հետ:

Սովոր՝ Փանտան. — (62° 25' 55" — 40° 23' 20'): Այս անունը գիւղը կրում է այն հանգամանքից, որ այստեղի միակ աղբեւրը կաթ կաթ էր բղիսում և յաճախ չորանում, հայերը կաթ կաթ բղիսելը ի նկատի առնելով կաթ կաթ էին կոչում, ուսւները նրա չորանալը ի նկատի առնելով չոր աղբիւր (սուխոյ Փանտան) անուանում: Պարսիկներն էլ Տամմջու էին կոչում, որ նոյն նշակութիւնն ունի:

Բաւական ժամանակ երեք վերսա հեռու, Ալափարս զիւղի

*) Մանրամասն նկարագրութիւնը տես նշանաւոր վանքերի բաժնում.

աղբիւրից ջուր կը ելուց յետ, վերջապէս գիւղացիները համայնական ուժերով նոյն աղբիւրը վիրանորոգեցին և առջնում մի աւազան շինեցին; որպէս զի այլնս ջրի պակասութիւն չզգան: Գիւղը բաղկացած է միայն մի, երկար և լայն փողոցից, որի երկու կողմում շինուած են քարէ կղմինտրածածկ տներ՝ ընդարձակ դաւիթիներով, այնպէս որ ընդամենը բռնում է 6 դ. 1440 ք. ս. տարածութիւն: Գիւղում կայ մի քանի խանութ, որ հայերին է պատկանում: Այստեղ է նաև երեանից 7.որ-Բայազէտ տանող խճուղու փոստային կայարանը:

Բնակիչները ուսւա աղանդաւոր մալականներ են, 1851 թ. այստեղ գաղթած. ընդամենը 36 տուն. 110 ար. 96 իգ. միասին՝ 206 հոգի, Մրանցից 2 տունը՝ 17 ար. և 3 իգ. հայեր են: Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և բեռնակրութեամբ: Ունին 224 դ. 1144 ք. ս. վարհանող, 383 դ. 960 ք. ս. խոտածեղի և 8 դ. 1920 ք. ս. արօտատեղի:

Թաղսի կամ Թաղցի ($62^{\circ} 23' 55'' - 40^{\circ} 28' 55''$).—Զետեղուած է Ալիբէկ լերան Թիգ-թափա գագաթի հարաւային կողմում, մի ձորակի մէջ, Հրազդանի ձախ ափին, և բռնում է 19 դ. 470 ք. ս. տարածութիւն, որից 17 դ. 90 ք. ս. շինութիւնների տակ է: Գիւղում կայ մի բաւական գեղեցիկ, նորաշէն եկեղեցի ս. Աստուածածին անունով: Իւղի արևմտեան կողմում գտնուում է մի գիւղի աւերակ, «Աղ զի ըի իր անունով, ուր գեռես մնում են մի քանի խաչքարեր և մի եկեղեցու հիմնապատեր: Մի այսպիսի գիւղատեղի ևս գտնուում է գիւղի հիւսիսային կողմում: Մի փոքրիկ մատուռ էլ Թու խ-Մանուկ անունով բարձրանում է գիւղի արևելեան կողմում: Բնակիչները 1830 թ. գաղթել են Մակուայ Օզակ գիւղից. ընդամենը 220 տուն են 910 ար. 910 իգ. միասին՝ 1820 հոգի: 1886 թուին այս գիւղից 30 տուն բաժանուելով՝ փոքր ինչ բարձր, փոստային ճանապարհի վրայ շինել են մի նոր գիւղ՝ Փոքր Թաղսի անունով: Երկու թաղակին էլ պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ և միասին ունին 1017 դ. 2390 ք. ս. վարելանող, 185 դ. 2060 ք. ս. խոտածեղի և 1430 դ. 996 ք. ս. արօտատեղի: 48 դ. 910 ք. ս. էլ անտառու:

Սոլակ ($62^{\circ} 22' 10'' - 40^{\circ} 28'$).—Ազատորէն փուռած է Հրազդան գետի ձախ ափի տափարակում և բռնում է 41 դ. 470 ք. ս. տարածութիւն, մինչդեռ շինութիւնները գրաւում են միայն 23 դ. 672 ք. սաժէն տեղ: Գիւղում կայ մի եկեղեցի ս. Յովհաննէս անունով: Գիտի անմիջապէս ափին կան հին տների աւերակներ. իսկ հանդէպի լերան գողաւորութեան մէջ բարձրանում է Մալ-

բախանքը, այն վանքը որ շինել է Յոհան Փիլիսոփան 636 թուին-
և որը եզր կաթողիկոսից Մայրագոմ է կոչուել *)).

Սոլակի այժմեան ընակիչները հայեր են, 1830 թուին Ար-
ճշշից և Վանայ վիլայէթից գաղթած. ընդամենը 179 տուն, 742
ար. 710 իգ. ի միասին՝ 1452 հոգի. Ունին եկեղեցական-ծխական
գպոցց Պարապում են երկրագործութեամբ և անասնապահու-
թեամբ. Ունին 1125 դ. 162 ք. ս. պետական վարելահող, 689 դ.
2244 ք. ս. խոտանեղի, 1564 դ. 2168 ք. ս. արօտատեղի. 103 դ.
766 ք. ս. էլ անտառ:

Աղջ արա. (62° 24'—40° 30' 35").—Դուրս է նայում անտա-
ռի միջից՝ փռուելով մի զառիվայրի վրայ և բռնելով 8 դ. 730 ք.
ս. տարածութիւն Տեղական տանդութիւնն ասում է՝ թէ գիւղը
իւր անունն ասացել է այն հանգամանքից, որ առաջին ընակիչ-
ներն այդ տեղում մնեց քանակութեամբ աղ (սպիտակ) փարա
(դրամ). են դտել: Գիւղում կայ մի եկեղեցի ո. Ստեփանոսի ա-
նուամբ, մի մատուռ և մի քանի խաչարձաններ՝ մի հին եկեղե-
ցու հիմնապատերի շուրջը. Մոտ հրեթ վիրստ դէպի արևմուտք
անտառի խորքում, ձորակի մէջ կիսաւեր կանգնած է տեղայի-
ներից Սուրբ Աջ անուանուած մի վանք, որի արևելեան պատի
վրայ գեռ ևս մնում են արձանագրութեան հետեւալ հրեթ բառը,
Ես Սրիշան վանառական...

Գիւղի ընակիչները հայեր են, 1829 թ. Մակուլց զաղթած.
ընդամենը 78 տուն. 426 ար. 352 իգ. միասին՝ 778 հոգի: Պարապում
են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 311 դ.
2080 ք. ս. վարելահող, 54 դ. 1490 ք. ս. խոտանեղի 420 դ.
2100 ք. ս. արօտատեղի և 525 դ. 1930 ք. ս. տարածութեամբ
անտառ:

Այս գիւղից մօտ 5—6 տուն ընակութիւն են հասատաել
գիւղից մօտ 1½ կիլոմետր հեռու Ն. Ալմահից դէպի Դարաչի-
չակ տանող ճանապարհի վրայ. Զանգու գիտի ափին և այստեղ
խանութներ բանալզի՝ առևտով են զրագլում: Այս փոքրիկ զա-
դութն էլ Աղփարա է կոչում:

Մարրավանք. (62° 23' 57"—40° 31' 35").—Զետեղուած է մի բըլ-
րի լանջին, Դարաչիչակ ամարանոցից մօտ 2 կիլոմետր հեռու: Բըլ-
ուում է 4 դ. 2010 ք. ս. տարածութիւն, որից ամբողջ 4 դ. 1370
ք. ս. զանուում է շինութիւնների տակ: Գիւղի ծայրում բարձրա-
նում է Մաքրավանքը, *) որ այժմ իր գիւղական եկեղեցի է
ծառայում: Բնակիչները հայեր են, չին Բայազէտից և Ալաշկեր-

*) Տես նշանաւոր վանքերի նկարագրութեան բաժնում:

տից դադթած, ընդամենը՝ 74 տուն. 470 ար. 320 իգ. միասին՝ 790 հոգի. Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 430 դ. 1022 ք. ս. վարելահող, 19 դ. 1065 ք. ս. խոտանեղի և 254 դ. 606 ք. ս. արօտատեղի: Շուրջը կայ 208 դ. 314 ք. ս. տարածութեամբ անտառ:

ԱՆԴԱՄԱԼԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Անդամալ. ($62^{\circ} 25' 25'' - 40^{\circ} 32' 55''$): Տեղաւորուած է Զանգի և Միսխանա գետերի միախառման տեղից փոքր հնչ արևելք, մի ընդարձակ հարթութեան վրայ: Բռնում է 13 դ. 1804 ք. ս. տարածութիւն, որից 10 դ. 866 ք. ս. գտնում է շինութիւնների տակ: Ծնդաման կոչւում է նաև Սիլիքի-պիւղ, Մելիք Շէկոյի անունով, որ 1830 թուին առաջնորդել է բնակիչներին Ալաշկերտից այստեղ դադթելու: Գիւղը երեք շատ հին է, որովհետև կան երեք եկեղեցու և երկու մատուռի հիմնապատեր:

Գիւղում կայ մի փայտածածկ եկեղեցի: Բնակիչները հայեր են, մի մասը Ալաշկերտից, միւսը Մակուից, Խոյից և Հին-Բայազէտից գաղթած: Ընդամենը 310 տուն. 1914 ար. 1855 իգ. ի միասին 3769 հոգի: Ունին եկեղեցական ծխական միդասեան դըպորց: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1589 դ. 1735 ք. ս. վարելահող, 52 դ. 1580 ք. ս. խոտանեղի, և 787 դ. 526 ք. ս. արօտատեղի: Գիւղի սահմանում կայ 352 դ. 470 ք. ս. տարածութեամբ անտառ:

Քարվանսարա ($62^{\circ} 25' 54'' - 40^{\circ} 31' 52''$):—Տեղաւորուած է Սուդանան կոչուած լիբան ստորոտում, մի գեղեցիկ հարթութեան վրայ: Հրազդանի ձախ ափին: Բռնում է 14 դ. 96 ք. ս. տարածութիւն, որից 9 դ. ծածկուած է շինութիւններով: Գիւղի հին անունը, ծերունիների ասելով, եղել է՝ «Գառնինի» միայն յետոյ շնորհիւ այստեղ շինուած և այժմ էլ կիսաւեր դրութեամբ մնացած: Կարավանատան (Քարվանսարայ) վերակոչուել է Քեարվանսարա: Գիւղը, ինչպէս երեսում է երեք աւեր եկեղեցիներից և հինգ հին գերեզմանատներից: Բաւական հին է: Ուշադրութեան արժանին բաւական գեղեցիկ եկեղեցին է: Բնակիչները հայեր են Հին Բայազէտից, Աւաջուղից և Խոյից գաղթած: Ընդամենը 240 տուն, 904 ար. 780 իգ. միասին՝ 1680 հոգի են: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1211 դ. 531 ք. ս. վարելահող, որից 270 դ. 600 ք. ս. իրենց գիւղացիներին է պատկանում, իսկ 11 դ. 783 ք. ս. կալուածատիրական է, 6 դ. 816 ք. ս. խոտանեղի և 553 դ. 726 ք. ս. արօտատեղի,